ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.04.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/63

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.03.2020թ. թիվ 26/26-1/4398-2020 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 19.03.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/874-2020 գրության հիման վրա, 20.03.2020թ. թիվ 26/26-1/4398-2020 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Պահապան» ՍՊԸ-ի (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Պահապան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Պահապան» ՍՊԸ-ն 03.04.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարությունից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հիմնավորումները գտնում է, որ դրանք թերի են և հիմնազուրկ հետևյալ պատճառաբանություններով՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցվում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 19.03.2018թ. կնքված ԲՄԱՊՁԲ-7/17 ծածկագրով գնման պայմանագրով և կից 30.04.2019թ. կնքված N 2 համաձայնագրով «Պահապան» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարությանն առավելագույնը մինչև 31.10.2019թ. պետք է մատակարարեր 7 անուն ապրանքատեսակ: «Պահապան» ՍՊԸ-ն պայմանագրում սահմանված ժամկետներում պատշաճ կերպով ՀՀ պաշտպանության նախարարությանն է մատակարարել 4 անուն ապրանքատեսակներն ամբողջությամբ, իսկ մնացած 3 անուն ապրանքատեսակներից չի մատակարարել՝

- 440 լրակազմ կիտել և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ամենօրյա (պայմանագրով նախատեսված 950-ի փոխարեն)
- 1275 հատ բաճկոն՝ գարնանային-աշնանային, կիսաբրդյա (պայմանագրով նախատեսված 3000-ի փոխարեն):
- 234 լրակազմ բաճկոն և տաբատ՝ կիսաբրդյա, սև գույնի (պայմանագրով նախատեսված 500 լրակազմի փոխարեն):

Ընկերությունը հայտնել է, որ 17.05.2018թ-ին կնքված ԲՄԱՊՁԲ-7/25-1 ծածկագրով մատակարարման պայմանագրով և կից 26.04.2019թ. թիվ 2 համաձայնագրով «Պահապան» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարությանն առավելագույնը մինչև 31.10.2019թ. պետք է մատակարարեր 5 անուն ապրանքատեսակ, որոնցից 3 անուն ապրանքատեսակը սահմանված ժամկետներում ու քանակություններով մատակարարվել են, իսկ 2 անուն ապրանքատեսակները մատակարարվել են մասնակի՝

- չի մատակարարվել 4103 սպիտակ վերնաշապիկ (պայմանագրով նախատեսված 4800 հատից):

- չի մատակարարվել 600 հատ սև գույնի վերնաշապիկ (պայմանագրով նախատեսված 900 հատից):

23.07.2019թ-ին կնքված ԳՀԱՊՁԲ-7/48-2 ծածկագրով մատակարարման պայմանագրով «Պահապան» ՍՊԸ–ն ՀՀ պաշտպանության նախարարությանն առավելագույնը մինչև 30.11.2019թ. պետք է մատակարարեր 12 անուն ապրանքատեսակ, որոնցից 9 անուն ապրանքատեսակը սահմանված ժամկետներում ու քանակություններով մատակարարվել են, իսկ 3 անուն ապրանքատեսակները մատակարարվել են մասնակի՝

- չի մատակարարվել 1000 հատ գլխարկանշան (պայմանագրով նախատեսված 3000 հատից):
- չի մատակարարվել 1000 հատ թևքանշան (ՌՀ) և այլ պարագաներ (պայմանագրով նախատեսված 2000 հատից):
- չի մատակարարվել 925 հատ թևքանշան (ՌԱՀ) (պայմանագրով նախատեսված 1000 հատից):

Ընկերությունը հայտնել է, որ վերոգրյալը հիմնավորում է, որ «Պահապան» ՍՊԸ-ն առավելապես կատարել է ստանձնած պայմանագրային պարտավորություններն, իսկ նշված մասնակի մատակարարված ապրանքատեսակների չմատակարարելու հանգամանքում բացակայում է «Պահապան» ՍՊԸ-ի «մեղքը», քանի որ ինչպես հաճախ է պատահում, ՀՀ պաշտպանության նախարարությունը ուշացումներով և ձգձգումներով է կնքում պայմանագրերը և համաձայնագրերը, նախորդ տարիներին բազմիցս իրազեկված լինելով, որ արտադրության կազմակերպման և պայմանագրային պարտավորությունների կատարման համար «Պահապան» ՍՊԸ-ն հումքն և այլ պարագաները ներկրում է արտասահմանից, որը տևում է շուրջ 4 ամիս:

Ընկերությունը հայտնել է նաև հետևյալը՝

ԲՄԱՊՁԲ-7/17-2 ծածկագրով մրցույթի բացումը տեղի է ունեցել 08.02.2018թ., մինչդեռ՝ պայմանագիրը կնքվել է 19.03.2018թ. (1 ամիս, 11 օր անց): Նույն պայմանագրի 2019թ. համաձայնագիրը կնքվել է 30.04.2019թ. տարվա սկզբից (շուրջ 5 ամիս անց):

ԲՄԱՊՁԲ-7/25-1 ծածկագրով մրցույթի բացումը տեղի է ունեցել 23.02.2018թ. մինչդեռ՝ պայմանագիրը կնքվել է 17.05.2018թ. (շուրջ 3 ամիս ուշացումով): Նույն պայմանագրի 2019թ. թիվ 2 համաձայնագիրը կնքվել է 26.04.2019թ. տարվա սկզբից (5 ամիս ուշացումով):

Նույն ժամկետների բացթողումը վերաբերվում է նաև ԳՀԱՊՁԲ-7/48-2 ծածկագրով պայմանագրին, որը կնքվել է 23.07.2019թ.:

Ամփոփելով՝ Ընկերությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված քանակություններով ամիսների անհիմն ու ապօրինի (ՀՀ Գնումների մասին օրենքի խախտումներով) բացթողումների, ապա շուրջ 4 ամիս տևող հումքի պատվիրման, պատրաստման և ՀՀ ներկրման պայմաններում արտադրողին, այսինք՝ Ընկերությանը տարվա ընթացքում մնացել է ընդհամենը 2-4 ամիս ժամկետ բուն արտադրությամբ զբաղվելու և այդ ամիսների ընթացքում ամբողջ տարվա համար նախատեսված պայմանագրային պարտավորությունները կատարելու համար, որը ռեալ և իրատեսական չէ: Այսինքն՝ պաշտպանության նախարարության հիշյալ ուշացումներն և ձգձգումներն են եղել Ընկերության կողմից որոշ ապրանքների թերմատակարարման միակ պատճառը:

Ընկերությունը հայտնել է, որ իր ունեցած տեղեկությունների համաձայն՝ պաշտպանության նախարարության ժամկետների հիշյալ բացթողումների պատճառով նման իրավիճակում են հայտնվել նաև ՊՆ-ի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտած այլ արտադրող ձեռնարկություններ ևս:

Ընկերությունը նշել է, որ վերը հիշատակված չմատակարարված ապրանքատեսակների հումքը Ընկերությունից անկախ պատճառներով (Լարսի անցակետը 2019թ. հոկտեմբեր-դեկտեմբեր փակ լինելու և հերթերի գոյացման պատճառով) Ընկերություն է հասել 2019թ.-ի դեկտեմբեր ամսին: 09.12.2019թ. Ընկերությունը թիվ 03/12 գրությամբ պաշտպանության փոխնախարար Մ. Ղամբարյանին հայտնել է հումքի ուշացման պատճառների, հումքի ստացման և արտադրության վերսկսման մասին, խնդրելով՝ մնացած ապրանքատեսակների քանակությունները համաձայնվել մատակարարելու 2020թ. հունվար ամսվա աշխատանաքային առաջին 20 օրերի ընթացքում, պատրաստակամություն հայտնելով անհրաժեշտության դեպքում ներկայացնելու համապատասխան բանկային երաշխիքներ և ուշացումների համար վճարելու տույժեր և տուգանքներ: Բանկային երաշխիքի առկայության պայմաններում իրավունք ունենալով ապրանքատեսակների քանակությունների 25 %-ի մատակարարումը փոխանցելու հաջորդ տարի, սակայն պաշտպանության նախարարությունը, Ընկերությանն անհայտ պատճառներով չի բավարարել խնդրանքը (համենայն դեպս գրավոր չի հայտնել Ընկերության խնդրանքը բավարարելու կամ մերժելու մասին), որի պատճառով մինչ օրս չմատակարարված վերը հիշատակված հանդերձանքները պատրաստի կամ հումք վիճակում գտնվում են Ընկերության պահեստում: Միայն 2020թ. մարտի 16-ին է պաշտպանության նախարարությունը միակողմանի լուծել վերը հիշատակված 3 պայմանագրերը և համաձայնագրերը:

Ընկերությունը հայտնել է, որ նշված 3 պայմանագրերի 2.1.1 կետերում շեշտված է, որ Գնորդը իրավունք ունի հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի: Նման պայմաններում տարակուսելի է, թե ինչու պաշտպանության նախարարությունը պայմանագրերը չի լուծել պայմանագրերի վերջնաժամկետներից 30 օր անց՝ ԲՄԱՊՁԲ-7/17-2 և ԲՄԱՊՁԲ-7/25-1 ծածկագրերով պայմանագրեր՝ 30.11.2019թ., իսկ ԳՀԱՊՁԲ-7/48-2 ծածկագրով պայմանագիր՝ 30.12.2019թ.:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է հիշյալ 3 ծածկագրերով պայմանագրերի ընթացակարգերի ճակատագիրը օբյեկտիվ լուծելու համար որոշման հրապարակման նիստը հետաձգել, ուսումնասիրելու համար հետևյալ էական հարցերը՝

1. նշված 3 պայմանագրերին նախորդող մրցույթները հայտարարելու ժամանակ գնման առարկաները ներառված են եղել գնումների պլանում և գնումների պլանը հրապարակված է եղել gnumner.am կայքում թե՝ ոչ, որը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 16-րդ և 17-րդ կետորի պարտադիր պայման է: Պլանը gnumner.am կայքում չտեղադրելը օրինախախտում է, հետևապես դրա հետ կապված մյուս գործողությունները՝ ոչ իրավաչափ:

2. պարզել, թե ինչու ՀՀ պաշտպանության նախարարությունը հիշյալ պայմանագրերը և դրանց կից համաձայնագրերը միակողմանի չի լուծել պայմանագրերով նախատեսված ապրանքատեսակների չմատակարարման վերջնաժամկետները լրանալուց 30 օր անց, այլ դա կատարել է 3-4 ամիս ուշացումով:

3. ՀՀ պաշտպանության փոխնախարարին ուղղված Ընկերության 09.12.2019թ. թիվ 03/12 գրությունից հետո ինչու Ընկերությանը ողջամիտ ժամկետ չի տրվել 2020թ. աշխատանքային առաջին 20 օրերի ընթացքում մատակարարելու թերի մատակարարված խմբաքանակները:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

«Պահապան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/63 ընթացակարգի շրջանակներում 27.03.2020թ. ժամը 10:20-ին և 06.04.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.03.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/874-2020 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև կնքված գնման պայմանագրի 2.1.7.1 կետերի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. մարտի 16-ին միակողմանի մասնակի լուծել է՝

1. «Պահապան» ՍՊԸ-ի հետ 19.03.2018թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/17-2 գնման պայմանագրին կից N 2 համաձայնագիրը:

2. «Պահապան» ՍՊԸ-ի հետ 17.05.2018թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/25-1 գնման պայմանագրին կից N 2 համաձայնագիրը:

3. «Պահապան» ՍՊԸ-ի հետ 23.07.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/48-2 պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնելով, որ վերոնշյալ պայմանագրի և համաձայնագրերի լուծման վերաբերյալ գրությունը 18.03.2020թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/63 ընթացակարգի շրջանակներում 27.03.2020թ. ժամը 10:20-ին և 06.04.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/63 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/63 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 19.03.2018թ. կնքվել է «ԲՄԱՊՁԲ-7/17-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր 1), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Պահապան» ՍՊԸ-ն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝

Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար (Հավելված N 2):

Պայմանագիր 1-ի շրջանակներում կողմերի միջև 27.04.2018թ. կնքվել է Պայմանագիր 1-ի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին Համաձայնագիր N 1-ը:

Պայմանագիր 1-ի շրջանակներում կողմերի միջև 30.04.2019թ. կնքվել է Պայմանագիր 1-ի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին Համաձայնագիր N 2-ը:

«Պահապան» ՍՊԸ-ին ուղղված 17.03.2020թ. թիվ ԴՎԱ/977 ծանուցմամբ՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 19.03.2018թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-7/17-2» պայմանագրին կից 30.04.2019թ. կնքված N 2 համաձայնագրի շրջանակներում Ընկերությունը պետք է մատակարարեր՝

- 950 լրակազմ կիտել և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ամենօրյա, որից չի մատակարարել 440 լրակազմ:
- 3000 հատ բաճկոն՝ գարնանային-աշնանային, կիսաբրդյա որից չի մատակարարել 1275 հատ:
- 500 լրակազմ բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա, սև գույնի, որից չի մատակարարել 234 լրակազմ:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. մարտի 16-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 18.03.2020թ հրապարակվել է Համաձայնագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքվել է «ԲՄԱՊՁԲ-7/25-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր 2), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Պահապան» ՍՊԸ-ն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար (Հավելված N 2):

Պայմանագիր 2-ի շրջանակներում կողմերի միջև 02.07.2018թ. կնքվել է Պայմանագիր 2-ի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին Համաձայնագիր N 1-ը:

Պայմանագիր 2-ի շրջանակներում կողմերի միջև 26.04.2019թ. կնքվել է Պայմանագիր 2-ի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին Համաձայնագիր N 2-ը:

«Պահապան» ՍՊԸ-ին ուղղված 17.03.2020թ. թիվ ԴՎԱ/976 ծանուցմամբ՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-7/25-1» պայմանագրին կից 26.04.2019թ. կնքված N 2 համաձայնագրի շրջանակներում Ընկերությունը պետք է մատակարարեր՝

- 4800 հատ վերնաշապիկ՝ երկարաթև սպիտակ, որից չի մատակարարել 4103 հատ,
- 900 վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՈ, որից չի մատակարարել 600 հատ,

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. մարտի 16-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 18.03.2020թ հրապարակվել է Համաձայնագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 23.07.2019թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-7/48-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր 3), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Պահապան» ՍՊԸ-ն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար (Հավելված N 2):

Պայմանագիր 3-ի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 12 անուն ապրանքատեսակների մատակարարման ժամկետ է սահմանվել 2019թ. ըստ եռամսյակների՝ 3-րդ եռամսյակ և 4-րդ եռամսյակ՝ ոչ ուշ քան 30.11.2019թ.:

«Պահապան» ՍՊԸ-ին ուղղված 17.03.2020թ. թիվ ԴՎԱ/975 ծանուցմամբ՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 23.07.2019թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-7/48-2» պայմանագրի շրջանակներում Ընկերությունը 2019թ. պետք է մատակարարեր՝

- 3000 հատ գլխարկանշան /գլխարկանշան զորատեսակի/, որից չի մատակարարել 1000 հատ,

- 2000 հատ թևքանշան և այլ պարագաներ /թևքանշան ՌՀ/, որից չի մատակարարել 1000 հատ,
- 1000 հատ թևքանշան և այլ պարագաներ /թևքանշան ՌԱՀ/, որից չի մատակարարել 925 հատ,

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. մարտի 16-ին միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 18.03.2020թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության 19.03.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/874-2020 գրությունը և կից փաստաթղթերը, «Պահապան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով՝ համաձայն Պայմանագիր 1-ի և Պայմանագիր 2-ի 8-րդ կետերի 8.1-րդ ենթակետերի՝ ***Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:*** Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարումը նախատեսվում է իրականացնել 2018-2020թթ. համաձայնագրերի կնքման միջոցով:

Համաձայն Պայմանագիր 1-ի և Պայմանագիր 2-ի 8-րդ կետերի 8.5-րդ ենթակետերի՝ ***պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:***

Համաձայն Պայմանագիր 1-ի և Պայմանագիր 2-ի 8-րդ կետերի 8.9-րդ ենթակետերի՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով ***պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին*** ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագիր 1-ի և Պայմանագիր 2-ի 2.1.7 ենթակետերի համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը***, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 19.03.2018թ. կնքվել է «ԲՄԱՊՁԲ-7/17-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Պահապան» ՍՊԸ-ն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար (Հավելված N 2):

Պայմանագիր 1-ի շրջանակներում կողմերի միջև 27.04.2018թ. կնքվել է Պայմանագիր 1-ի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին Համաձայնագիր N 1-ը:

Պայմանագիր 1-ի շրջանակներում կողմերի միջև 30.04.2019թ. կնքվել է Պայմանագիր 1-ի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին Համաձայնագիր N 2-ը:

«Պահապան» ՍՊԸ-ին ուղղված 17.03.2020թ. թիվ ԴՎԱ/977 ծանուցմամբ՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 19.03.2018թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-7/17-2» պայմանագրին կից 30.04.2019թ. կնքված N 2 համաձայնագրի (հետայսու նաև՝ Համաձայնագիր) շրջանակներում Ընկերությունը պետք է մատակարարեր՝

- 950 լրակազմ կիտել և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ամենօրյա, որից չի մատակարարել 440 լրակազմ:
- 3000 հատ բաճկոն՝ գարնանային-աշնանային, կիսաբրդյա որից չի մատակարարել 1275 հատ:
- 500 լրակազմ բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա, սև գույնի, որից չի մատակարարել 234 լրակազմ:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. մարտի 16-ին ***միակողմանի մասնակի լուծել է <u>Համաձայնագիրը</u>***:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 18.03.2020թ հրապարակվել է Համաձայնագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքվել է «ԲՄԱՊՁԲ-7/25-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Պահապան» ՍՊԸ-ն պարտավորվել է սույն

պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար (Հավելված N 2):

Պայմանագիր 2-ի շրջանակներում կողմերի միջև 02.07.2018թ. կնքվել է Պայմանագիր 2-ի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին Համաձայնագիր N 1-ը:

Պայմանագիր 2-ի շրջանակներում կողմերի միջև 26.04.2019թ. կնքվել է Պայմանագիր 2-ի գնման և վճարման ժամանակացույցերը հաստատելու մասին Համաձայնագիր N 2-ը:

«Պահապան» ՍՊԸ-ին ուղղված 17.03.2020թ. թիվ ԴՎԱ/976 ծանուցմամբ՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-7/25-1» պայմանագրին կից 26.04.2019թ. կնքված N 2 համաձայնագրի (հետայսու նաև՝ Համաձայնագիր) շրջանակներում Ընկերությունը պետք է մատակարարեր՝

- 4800 հատ վերնաշապիկ՝ երկարաթև սպիտակ, որից չի մատակարարել 4103 հատ,
- 900 վերնաշապիկ՝ երկարաթև սև գույնի ՌՈ, որից չի մատակարարել 600 հատ,

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. մարտի 16-ին ***միակողմանի մասնակի լուծել է <u>Համաձայնագիրը</u>***:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 18.03.2020թ հրապարակվել է Համաձայնագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ Գնումների հետ կապված բողոքներ անձն արձանագրում է, որ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագիր 1-ի և Պայմանագիր 2-ի 2.1.7.1 ենթակետերի բ) պարբերությունների պահանջները, միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագրերը, որոնց վերաբերյալ ծանուցումները 18.03.2020թ. հրապարակել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում:

Պայմանագիր 1-ի և Պայմանագիր 2-ի 2.1.7 ենթակետերով սահմանված է Պատվիրատուի կողմից **<u>Պայմանագրի միակողմանի լուծելու իրավունքը</u>**, մինչդեռ Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծել է 19.03.2018թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-7/17-2» և 17.05.2018թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-7/25-1» պայմանագրերի հիման վրա Կողմերի միջև կնքված Համաձայնագրերը, որոնք համաձայն Պայմանագրերի 8-րդ կետի 8.5-րդ ենթակետերի հանդիսանում են Պայմանագրերի անբաժանելի մասը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Այսպիսով՝ գտնում եմ, որ Համաձայնագրերի լուծման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 23.07.2019թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-7/48-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Պահապան» ՍՊԸ-ն պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար (Հավելված N 2):

Պայմանագիր 3-ի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 12 անուն ապրանքատեսակների մատակարարման ժամկետ է սահմանվել 2019թ. ըստ եռամսյակների՝ 3-րդ եռամսյակ և 4-րդ եռամսյակ՝ ոչ ուշ քան 30.11.2019թ.:

«Պահապան» ՍՊԸ-ին ուղղված 17.03.2020թ. թիվ ԴՎԱ/975 ծանուցմամբ՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 23.07.2019թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-7/48-2» պայմանագրի շրջանակներում Ընկերությունը 2019թ. պետք է մատակարարեր՝

- 3000 հատ գլխարկանշան /գլխարկանշան զորատեսակի/, որից չի մատակարարել 1000 հատ,
- 2000 հատ թևքանշան և այլ պարագաներ /թևքանշան ՌՀ/, որից չի մատակարարել 1000 հատ,
- 1000 հատ թևքանշան և այլ պարագաներ /թևքանշան ՌԱՀ/, որից չի մատակարարել 925 հատ,

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. մարտի 16-ին միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 18.03.2020թ հրապարակել է ***Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը***:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագիր 3-ի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագիր 3-ի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն վաճառող կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,***

Այսպիսով՝ «Պահապան» ՍՊԸ-ն իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 23.07.2019թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-7/48-2» Պայմանագրով ստանձնել է 2019թ. ըստ եռամսյակների՝ 3-րդ եռամսյակ և 4-րդ եռամսյակ՝ ոչ ուշ քան 30.11.2019թ., ՀՀ

պաշտպանության նախարարությանը 12 անուն ապրանքատեսակներ մատակարարելու պարտականությունը: Արձանագրում եմ, որ «Պահապան» ՍՊԸ-ն Պայմանագիր 3-ը լուծելու օրվա դրությամբ, Պայմանագիր 3-ով նախատեսված 3000 հատ գլխարկանշանից /գլխարկանշան զորատեսակի/ չի մատակարարել 1000 հատ, 2000 հատ թևքանշան և այլ պարագաներից /թևքանշան ՌՀ/ չի մատակարարել 1000 հատ, 1000 հատ թևքանշան և այլ պարագաներից /թևքանշան ՌԱՀ/ չի մատակարարել 925 հատ, ապրանքների մատակարարման ժամկետը խախտվել է 30 օրից ավելի, որի հետևանքով «Պահապան» ՍՊԸ-ն թույլ է տվել Պայմանագիր 3-ի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագիր 3-ի միակողմանի մասնակի լուծման:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից դիրքորոշմամբ ներկայացված միջնորդությանը՝ որոշման հրապարակման նիստը հետաձգելու վերաբերյալ, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից միջնորդությունը մերժվել է այն հիմնավորմամբ, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սույն ընթացակարգը նախաձեռնվել է դեռևս 20.03.2020թ., որի հիման վրա Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից Ընկերությանը նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ նյութերը ուղարկվել են 20.03.2020թ., միաժամանակ 27.03.2020թ. ժամը 10:20-ին և 06.04.2020թ. ժամը 10:15-ին հրավիրվել են նիստեր, որոնց վերաբերյալ Ընկերությունը պատշաճ ծանուցված լինելով չի ապահովել իր մասնակցությունը: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ Ընկերությանը 27.03.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի շրջանակներում արդեն իսկ տրվել է 3 աշխատանքային օր ժամկետ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու համար, հետևաբար Ընկերությունն ունեցել է բավարար ժամանակ Ընթացակարգի նյութերն ուսումնասիրելու և ապացույցներ ներկայացնելու համար:

Նման պայմաններում, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Պահապան» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.03.2020թ. թիվ 26/26-1/4398-2020 գրությամբ «Պահապան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Պահապան» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**